ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ

Բյուջե: $15 մլն դոլար
Ժամանակացույց: 2023 – 2028

Հայաստանն ունի կենսունակ մեդիա դաշտ, որը, սակայն, կանգնած է մարտահրավերների առաջ: Անկախ լրատվամիջոցները, ունենալով սահմանափակ ռեսուրսներ, դժվարանում են մշտապես ապահովել որակյալ տեղեկատվություն և այն հասցնել լայն լսարանի, այդ թվում՝ երիտասարդներին, փոքրամասնություններին և գյուղական համայնքների բնակիչներին: Հայաստանում քիչ են անկախ, ֆինանսապես կայուն լրատվամիջոցները, և վտանգված է նրանց երկարաժամկետ անխափան գործունեությունը:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող Հայաստանի մեդիայի զարգացման ծրագիրն աջակցում է երկրում անկախ մեդիայի կայացմանը: Ինտերնյուսի և գործընկերներ՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի (ՄՆԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ) և «Զինք նեթվորք»-ի կողմից իրականացվող ծրագիրը բարելավում է լրագրողական սկզբունքները, խթանում է հանրային նշանակություն ունեցող ԶԼՄ-երի մրցունակությունն ու ֆինանսական կենսունակությունը և ձևավորում է միջավայր՝ ապատեղեկատվությունից պաշտպանելու համար:

2023թ.-ի վերջից Ծրագիրը համագործակցում է Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի, Հանրային լրագրության ակումբի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ՝ նպատակ ունենալով մեծացնել ծրագրի հասանելիությունն ու ազդեցությունը, քանի որ գործընկերները հոգեբանական, թվային և իրավական աջակցություն են տրամադրում լրատվամիջոցներին և լրագրողներին և ընդլայնում են շահերի պաշտպանության գործողությունները:

Ծրագրի արդյունքները 2024թ. փետրվարի տվյալներով

- Ծրագիրն **աջակցել է 55 լրատվամիջոցների**՝ բարելավելով նրանց թվային անվտանգությունը, տրամադրելով իրավաբանական և հոգեբանական աջակցություն, օգնել նրանց բարելավել էթիկայի չափանիշները:
- Լրատվամիջոցների **69 ներկայացուցիչներ մասնակցել են դասընթացների**, այդ թվում՝ լրագրողական հմտությունների և էթիկայի կանոնների, մեդիագրագիտության, ֆիզիկական և թվային անվտանգության, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական թեմաներով:
- **Media.am-ը թողարկել է ընդհանուր առմամբ 193 նյութ**, որ վերաբերում են մեդիա դաշտում տեղի ունեցող ուշագրավ իրադարձություններին և մարտահրավերներին:
- **«Թվապատում 2023» մրցույթին մասնակցել է 106 լրագրող** Հայաստանի 47 լրատվամիջոցից:
- Երևանի մամուլի ակումբը կազմակերպել է **ԶԼՄ-ների ինքնակարգավորման ամենամյա համաժողովը**, որը համախմբել է տարբեր շահագրգիռ կողմերի:
- Ծրագրի մեկնարկից ի վեր հայկական **11 լրատվամիջոց ընդունել է Հայաստանի ԶԼՄ-ների և լրագրողների էթիկայի կանոնագիրը**:
- Հարյուրից ավելի դպրոցներ մասնակցել են **Մեդիագրագիտության շաբաթվան**, այդ թվում՝ անցկացրել են քննարկումներ, բանավեճեր, դասախոսություններ, սեմինարներ և կրթական միջոցառումներ:
- Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը հիմնել է **Մեդիագրագիտության խորհրդատվական խումբը**, որը համակարգում է շահագրգիռ կողմերի աշխատանքը մեդիագրագիտության տարածման ոլորտում:

Լրատվամիջոցներին տրամադրվող դրամաշնորհները

Բովանդակության մշակում	Տեխնիկական զարգացում	Ռազմավարական զարգացում	Ճգնաժամերի հաղթահարում
Առնվազն 70 դրամաշնորհ որակյալ մեդիա բովանդակության համար ծրագրի 5 տարիների ընթացքում: 18 դրամաշնորհ տրամադրվել է ծրագրի երկրորդ տարվա ընթացքում	Առնվազն 21 դրամաշնորհ տեխնիկական խնդիրների լուծման, վերազինման համար, որոնցից 8-ը տրամադրվել է ծրագրի երկրորդ տարվա ընթացքում:	7 դրամաշնորհ լրատվամիջոցների թիմերի, բիզնես մոդելների, խմբագրական մշակույթի համալիր փոփոխությունների համար. 5-ը տրամադրվել է ծրագրի երկրորդ տարվա ընթացքում:	Ճգնաժամային իրավիճակներում մեդիաներին աջակցելու ճկուն և արագ մեխանիզմ: Արդեն 2 տրամաշնորհ տրամադրվել է ծրագրի իրականացման երկրորդ տարվա ընթացքում:

Լրագրության գերազանցության աքսելերատոր

Լրագրության գերազանցության աքսելերատորի միջոցով Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը ապահովում է գործնական ուսուցում և մենթորություն լրատվամիջոցների և բովանդակություն ստեղծողների համար: ՄՆԿ-ն օգնում է լրատվամիջոցներին մշակել խմբագրական քաղաքականություն և էթիկայի սկզբունքներ, զարգացնում է լրագրողների մասնագիտական հմտությունները, սովորեցնում է կիրառել նորարարական գործիքներ՝ մրցունակ և որակյալ բովանդակության ստեղծման համար:

Ինտերնյուսը դրամաշնորհներ է տրամադրում լրատվամիջոցներին և բովանդակություն ստեղծողներին, իսկ թվային միջավայրում այդ նյութերի լայն տարածմանն ու ազդեցության ընդլայնմանը աջակցում է Ինտերնյուսի բովանդակության տարածման թիմը:

Հանրային նշանակություն ունեցող ԶԼՄ-երի ֆինանսական կենսունակություն

Ծրագրի օգնությամբ լրատվամիջոցները մշակում են զարգացման բիզնես պլաններ և լսարանի ներգրավման ծրագրեր՝ գրանցելով եկամտի աճ և ստեղծելով անխափան գործունեության հիմքեր: Ինտերնյուսը ռազմավարական զարգացման և տեխնիկական զարգացման դրամաշնորհներ է տրամադրում լրատվամիջոցներին, իսկ «Զինք նեթվորք»-ը մասնագիտական խորհրդատվությամբ աջակցում է բիզնես ծրագրերի կայացմանը:

Ծրագիրը նաև նպատակ ունի հիմնել Մեդիայի աջակցության հիմնադրամ և նպաստել դրա հետագա ինստիտուցիոնալացմանը:

Նպաստավոր միջավայր որակյալ լրատվական դաշտի համար

Երևանի մամուլի ակումբը և մյուս գործընկերները հետևում են լրատվական դաշտին վերաբերող օրենսդրությանը, պետական քաղաքականության փոփոխություններին, մասնակցում են դրանց մշակմանն ու իրականացմանը, բարձրաձայնում են լրագրողների իրավունքների ու ազատությունների խախտումները:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի Մեդիայի պաշտպանության հիմնադրամը լրագրողներին ու լրատվամիջոցներին տրամադրում է անվճար իրավաբանական ծառայություններ:

ԵՄԱ-ն մշակում է քաղաքականության բարեփոխման առաջարկներ և զբաղվում է շահերի պաշտպանությամբ՝ համագործակցելով պետական մարմինների հետ: ԵՄԱ-ն աջակցում է լրատվամիջոցների ինքնակարգավորման համակարգի ճանաչման և պետական քաղաքականության մաս դարձնելու գործընթացին՝ ապահովելով ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի ակտիվ դերակատարումը այս գործում:

Ծրագիրը նպաստում է լրատվամիջոցների կարգավորող մարմինների անկախությանը՝ աշխատելով Հանրային հեռուստատեսության և ռադիոյի խորհրդի հետ:

Մեդիագրագիտություն

Համագործակցելով Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ՝ ծրագիրն աջակցում է կրթական համակարգում մեդիագրագիտության ինստիտուցիոնալացմանը: Ծրագիրը բարելավում է երիտասարդների, ուսուցիչների և երիտասարդական աշխատողների մեդիագրագիտության հմտությունները:

Առանցքային հետազոտություններ

Հայաստանում խոսքի ազատության և մեդիայի սպառման հետազոտություն
Առաջին հետազոտությունն իրականացվել է ծրագրի առաջին տարվա ընթացքում՝ տրամադրելով արժեքավոր տվյալներ Հայաստանում ԶԼՄ-ների սպառման միտումների վերաբերյալ: Ինտերնյուսը հետազոտությունը կանցկացնի ամեն տարի, ինչը թույլ կտա ունենալ Հայաստանի տեղեկատվական էկոհամակարգի շարունակական վերլուծություն:

Մեդիա շուկան
Առաջին հետազոտությունն իրականացվել է 2023թ.-ին «Զինք նեթվորք»-ի կողմից՝ Հայաստանում գովազդի և մեդիա շուկայի գնահատման նպատակով: Այս հետազոտությանը կհաջորդեն միջանկյալ և վերջնական հետազոտություններ, որոնք կկիրառվեն լրատվամիջոցների բիզնես ծրագրերը, զարգացման ռազմավարությունը մշակելու համար:

Մեդիագրագիտություն դասավանդողների համապարփակ կարիքների գնահատում
Գնահատումն իրականացնում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը: Գնահատման արդյունքները կօգնեն ավելի արդյունավետ դարձնել մեդիագրագիտության ինստիտուցիոնալացմանն ուղղված ծրագրերը: